

„ԳՐՈՇԻ“ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի ՀԱՄԱՐԻ ՀԱՎԵԼՎԱԾ

Մ. Ֆ. ԵԿԻՐՅԱՏՈՎ

ԱԶՈՎ-ՍԵՎԾՈՎՅԱՆ  
ԿՈՒՍԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ԶՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԶԵԿՈՒՑՈՒՄ ՌՈՍՏՈՎԻ  
ԿՈՒՍԱԿՏԻՎԻ 1935 ԹՎԻ  
ՄԱՅԻՍԻ 28-Ի ԺՈՂՈՎՈՒՄ

ՅԿՈՅ

Ը - 70



8418

ԱԶՈՎ-ՍԵՎԾՈՎՅԱՆ ԿՈՒՍԿԱԶ-  
ՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԶՏՄԱՆ  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԸՆԿ. Մ. Ֆ. ՇԿԻՐՅԱՏՈՎԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ  
ՌՈՍՏՈՎԻ ԿՈՒՍԱԿՏԻՎԻ 1935 ԹՎԻ ՄԱՅԻՍԻ  
28-Ի ԺՈՂՈՎՈՒՄ

Ընկերներ, Սղով-Սևծովյան յերկրամասի  
կուսակցական կազմակերպության զտումն  
ավարտվեց մի բանի ամիս առաջ: Այժմ ան-  
հրաժեշտ ե ամփոփել կուսկազմակերպու-  
թյունների աշխատանքի այն բոլոր թերու-  
թյուններն ու զրահան կողմերը, վորոնք  
հայտաբերված են զտման ժամանակ: Այդ  
պետք ե նրա համար, վորպեսզի զտման դա-  
սերի վրա սովորենք ժամանակին ուղղել  
այն թերությունները, վորոնք կարող են լի-  
նել մեր հետագա աշխատանքում:



6199-67

Հաշվետու զեկուցումիս մեջ յես մանրամասն կանգ չեմ առնելու գտման զբաղան կողմերի վրա: Զեկուցումիս մեծագույն մասը յես ուզում եմ նվիրել այն թերություններին, վորոնք տեղի յեն ունեցել գտման անցկացման աշխատանքում և այն բացասական հանգամանքներին, վորոնք հայտարարեց գտումը մեր կուսկազմակերպության մեջ:

Ազով-Սեծովյան կուսկազմակերպությունն ընդհանուր առմամբ բոլշևիկյան առողջ, լավ կազմակերպություն է: Այդ յերևում է այն վիթխարի աշխատանքից, վորն Ազով-Սեծովյան կուսկազմակերպությունը վերջին ժամանակում կատարել է վողջ կուսակցության հետ միասին: Անցյալում Ազով-Սեծովյան կուսկազմակերպությունն ունեցել է առանձին թերություններ, վորոնք առանձնապես նկատելի էին գյուղական ռայոններում: Բայց Կենտկոմի արած ցուցումներից հետո այդ թերություններն ուղղվեցին, իսկ այժմ մենք ունենք յերկրամասում կոլտնտեսային լավ և ամուր տնտեսություն:

Կուսակցական այն գտումը, վոր մենք անցկացրինք ձեզ հետ, լավ ցնցեց և զորահավաքեց կուսակցական կազմակերպու-

թյունը, իսկ կուսկազմակերպությունների շուրջը նա բարձրացրեց և զորահավաքեց բանվորական և կոլտնտեսային անկուսակցական լայն մասսաներին: Զտումը զորահավաքեց այդ մասսաներին այն բոլոր հարցերում, վորոնք քննարկվում էին կոմունիստների և կուսկազմակերպությունների աշխատանքն ստուգելիս:

Դրա հետևանքով, գտման սկզբին առանձին ցեխեր, ֆաբրիկներ և գործարաններ հաշվի առան իրենց թերությունները և, արտադրության և կուսակցական աշխատանքի տեսակետից, լավ առաջադիմեցին: Նույնը մենք ունեցանք նաև գյուղական կուսկազմակերպություններում:

Մեր գտումը, վորին, ինչպես արդեն ասացի, ակտիվորեն մասնակցեցին վոչ միայն կուսակցական, այլ և անկուսակցական և կոմյերիտական լայն մասսաները, անկասկած շատ զբաղան արդյունքներ տվեց: Ծիշտ է, յես չեյի ասի, վոր կոմյերիտությունը շատ լավ էր մասնակցում գտման աշխատանքին: Սյատեղ, այդ աշխատանքում կոմյերիտականներն այնպես էին իրենց պահում, վոր իբր թե կուսակցության գտումը միայն կուսակցության գործն է և դա իրենց չի վե-

բարբերում: Յես չեմ ուզում ասել, վոր զա տեղի ուներ ամեն տեղ, վորջ յերկրամասում: Առանձին կազմակերպություններում կոմյերիտականները լավ մասնակցություն եյին ցույց տալիս կուսգտմանը և մեծ ուժուտ տվին մեր աշխատանքին: Մի շարք կազմակերպություններում կոմյերիտականները, ինչպես նաև անկուսակցական բանվորներն ու կորսնտեսականներն ոգնեցին մեզ ազատվելու մեծ թվով մարդկանցից, վորոնք կուսակցությանը հարկավոր չեյին: Բայց և այնպես կոմյերիտականներն իրենց հիմնական մասսայով անբավարար մասնակցեցին մեր աշխատանքին:

Չտման ժամանակ մենք հայտաբերեցինք կուսկազմակերպությունների աշխատանքում վոչ միայն բավականաչափ վատ, այլ և մեծ քանակությամբ լավ որինակներ: Մենք պետք է հաշվի առնենք այդ բոլորը, և՛ լավ և՛ վատ կողմերը: Վատ որինակներով մենք պետք է սովորենք, թե ինչպես չպետք է աշխատել, իսկ լավ որինակներով — ինչպես պետք է կատարել մեր կուսակցական գործը, ինչպես պետք է կազմակերպել մեր և՛ արտադրական և՛ կուսակցական աշխատանքը:

## ԻՆՉՊԵՍ ԵՐ ԱՆՑՆՈՒՄ ՉՏՈՒՄԸ

Անցնելով այն հարցին, թե ինչպես եր անցնում գտումը յերկրամասում, յես պետք է նախ և առաջ մասնանշեմ, վոր մինչև զտման սկիզբը յերկրային կուսկազմակերպությունը բավարար կերպով չեր ճանաչում իր կուսակցական ակտիվին: Այդ մենք իսկույն նկատեցինք, հենց վոր սկսեցինք ստուգել այն ընկերներին, վորոնց առաջարկել եյին կուսկազմակերպությունները զտման հանձնաժողովի կազմի համար: Դուք գիտեք, վոր կուսակցության կենսկոմի վորոշման մեջ ասված է, վոր հանձնաժողովի կազմի համար ընտրվեն լավագույն ընկերները, վորոնց կարելի յե հավատալ այնպիսի պատասխանատու գործ, ինչպիսին է կուսակցության զտումը: Այդ մարդիկ վոչ մի բանում չպետք է արատավորված լինեն և լինեն քաղաքականապես լավ գրագետ: Իսկ լինչ ցույց տվեց գործը: Յես չեմ թվելու ձեզ այն բոլոր կուսկազմակերպությունները, վորոնք ճիշտ մոտեցում չեն ունեցել զտման հանձնաժողովի կազմի համար ընկերներին ընտրությանը: Այդ հարցի առթիվ յես կրեբեմ միայն մի-յերկու որինակ:

սի պլնամիմզց ւանգոնտիկոս ոչձոտատոլնո  
 նևո եգր յրադնս մզն ատի դ տմի վժնոթոլմ  
 ոտրան մզ յրսիոս ոչսավյրսի պլնամիմզց ոչս  
 վրսի պլնամիմզց պտժրանկիտորսի մոտրան  
 սվլտտ նևան մզ դրանթրանկիտոստր վովիտ  
 Նոյլ գթլ 'պոտր ոլն ժոսոլ մոտժ վր յրբն

ուչսավյրսի ոտիտոսմոզգի  
 պտժրանկիտորսի նվոնգր մզ յրսնչուչտև  
 նևո սգիոնոյվ Վգոնտիկոս ոգիոնոտ պրսան  
 ոտնոնսմտիչ յ մմզոժոդսմոտր ոչվն յրսմի  
 մսի ժոսմսի նևոժ 'նվմզոտովոդսրսի ոլրան  
 տիտլ ջոիմսոլմ 'յրսոտովնուչ ոչվն մզո  
 մզիոլմ իտլ ժոսմսի 'ոչվմզոչտեոտոլոզ վովիտ  
 ոլնո վիսնսրոտոչոչուչ յ Լգոլմսաոլսի ժոլվն  
 ջոիիոլսո ժոչր յրսմզժոզն ոչլոտսոլ մոտր  
 ոչս րսլոմտտիչ տնվջ մժոլոտտոլնո ոտրան  
 րանս 2 'մոտրոչ րսլիջոտջ մմզոդրանթրոջ  
 մանոնուչ ոչվիոլոլ նոչմվ 'րանս 2 Լգոլոչ նվժ  
 ոտտտոլնո 'նամզձն ոլրսն մժոլոտտոլնո ոչի  
 մսի 'րանս 67 Լգոլմոտոլսի ժոտնզլ ջոիիոլսո  
 ժոչոլ ոչվմզոլմզիոլմ նևո Լգոլմոտոլսի ջոիիոլսո  
 ժոչր ժոլվն իսմզոտոջստև Նոյլ կոլ 'մզոչտե  
 տոլոլ 89 Լգոլսի ժոտնզլ ջոիիոլսո ժոչր  
 տնոլմ կոլ '07 — յրսմզոչսոտ ոտիտևրան  
 յ 99 — յրսմզոչսոտ ոտիտմզմոդրաննո  
 'մզոչտեոտոլոլ րոլմզ ոչվնգիոլսի նվժնիո ոտր

տմն յրսիստոսյ ոչվմզոչտեոտոլոլ ժմոն վր  
 վիսնսրոտոչոչուչ ոտրան Լգոլսի ժոտնզլ ջոի  
 տոլսո ժոչր սոչս նրսլոնո պրսան ոչնևո  
 մսի 'զն ոտիտոտտոն մսի քչ 'մզոլմզիոլմ

Նգր վմզոչսոլսի ոտրերստո  
 Լգմսոլմ յրս ոչվնգտվեչ յ յրսսոչի ոչվն  
 մզոտովոդսրսի վիտևրս ոչմզոլմոնսմոտժ  
 ոչլոտտո վմզոչսիտոս մսի 'ոտմոլ մզ յրսո  
 ոտոչ մոլմ մսի քժ 'նոլոննոտր մզր յրանոլ  
 ոտջ ժոլմ տոի ժոչր մսի 'ոլոտր ոլն 'մզո  
 մզիոլմ 'ժոլոմն յրսոտոլ ոչ ոլոտր քչոլ

րսջոլիգթլ նգիմն  
 տոլսի միզր կոլ 'նվոչրանկիտորսի նգի  
 մտսի միզր նվնոտմոլ յրսմսի տոմ 'յնս 01  
 ոչվնգիոլրանոլմ ովոչերստո 'նվմզոլմզիոլմ 29  
 ջոիիմոլոտտո մզոչտեոտո վիսնսրոտոչոչուչ ոտի  
 տևներստո ոչիմսի նվոլնսի վրսիտոս յրսո  
 սոտս նևոլ 'մոլսոտ ոտիտմտոլսմն վիսո  
 ոսյ մոտրոչ վիտոլվմս ժոչոլնմզի գթլ յոկ  
 մոտրսո

որսի մզ Լգմնմզի ոչսավյրսի պլնամիմզց ոտլ  
 րանկիտորսի ոչվիթլ 9961 սգև 'նգիեմտև  
 սոչս ոգիոնոյվ 'նվմսի 'իսոլոչմն ոչսի վր  
 մզ ջոիիմոլմ յրսյոնոլ վիսնսրոտոչոչուչ  
 ոտրան յրսոլսոտ նևոլ 'մոլսոտ վիոլճերսի  
 նոչս երսիգթլ մոտրոչ վիտոլվմս ժոչոլնմզի

միտեն ստուգեց, թե ինչպես են պատրաստ-  
ված տեղերն այդ աշխատանքն անցկաց-  
ներու համար և 1934 թվի մայիսի 12-ին  
մատնանշեց Ռոստովի, Շախտի, Նովորոսի-  
սկի, Կրասնոդարի, Տուսպսեյի քաղկեմներին  
և Նովոչերկասկի ուսյկոմին այն, վոր նրանք  
ժամկետին չեն կատարել Յերկրկոմի հրա-  
հանգը լավագույն ընկերներին ստուգման  
կոմիտեների մեջ ընտրելու մասին: Հունիսի  
18-ին Յերկրկոմի պենումը լսեց կուսկազ-  
մակերպությունների գտման ընթացքի մա-  
մին ինֆորմացիան և մի շարք կոնկրետ ցու-  
ցումներ արավ կուսկազմակերպություն-  
ներին՝ ոգտագործելու գտումը կուսակցու-  
թյունից վտարվածների փոխարեն ախտիվ և  
ուժեղ ընկերներին ղեկավար աշխատանքների  
առաջ քաշելու համար, գտման ժամանակ  
բոլշևիկյան քննադատություն և ինքնաքն-  
նադատություն ծավալելու, հայտարբերելու  
անհարազատներին և նրանց, վորոնք անար-  
ժան են կուսակցության մեջ լինելու, կազ-  
մակերպությունների աշխատանքի թերու-  
թյուններն ու դրական կողմերը հայտարե-  
րելու համար, վորպեսզի գտման պրոցեսում  
զորահավաքվեն կուսկազմակերպություն-  
ները և անկուսակցական ընկերները անտե-

տական և քաղաքական կարևորագույն խն-  
դիրներ — հացահավաքը, հացահանձնումը,  
արդ ֆինպլանը և այլն կատարելու համար:

## ՉՏՄԱՆ ԻՆՉՊԻՍԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՆՔ ՅԵՎ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ ԵՆ ՆՐԱՆՔ ԽՈՍՈՒՍ

Ազով-Սևծովյան կուսկազմակերպությունն  
(առանց կարմիր բանակի) ընդամենն ունի  
105. 533 կոմունիստ (կուսանդամ՝ 77.319  
և թեկնածու՝ 28.214): Այդ յես տալիս եմ  
ձեզ ձեր կուսկազմակերպության քանակու-  
թյան մասին յեղած վերջնական տեղեկու-  
թյունները, իսկ յերբ մենք սկսեցինք գտումը,  
ապա Յերկրկոմի հաշվով կուսկազմակեր-  
պության մեջ հաշվվում էլին 113.762 կո-  
մունիստներ: Իսկ յերբ մենք սկսեցինք գտումը  
և սկսեցինք կազմել կոմունիստների ցուցակ-  
ները, ապա իսկույն և յեթ մեր հաշվում  
6872 կոմունիստներ պակասեցին և կուս-  
կազմակերպության մեջ մնացին վոչ այն-  
քան, վորքան հաշվում եր Յերկրկոմը, այլ  
106.890 կոմունիստներ: Իսկ գտումն անց-  
կացնելու ընթացքում յերկրամասի կոմու-  
նիստների քանակն ել ավելի պակասեց և  
ստացվեց այն թիվը, վորն յես տվի ձեզ,

այսինքն՝ 105.533: Ընկերներ, ինչի՞ մարին  
ե խոսում այդ Այդ խոսում ե այն մասին,  
վոր մենք չգիտեյինք, թե վորքան կոմու-  
նիստներ ունենք. գիտեյինք, վոր մեր կուս-  
կազմակերպությունը մեծ ե, իսկ թե ինչ-  
քան ե կոմունիստների թիվը — հայտնի չե:

Իմ հրապարակած թվերից մենք ստուգե-  
ցինք վոչ բոլոր կոմունիստներին, վորով-  
հետև նրանցից 22.591 հոգի յենթարկվել էյին  
վաղաժամ գտման 1932 — 33 թվերին և,  
հետևապես, այս գտմանը յենթակա էյին  
ընդամենը 82.942 կուսանդամներ և թեկ-  
նածուներ:

Չտման ինչպիսի արդյունքներ ունենք  
մենք: Ընդամենը մենք անցկացրինք (առանց  
հարմիր բանակի) 81.097 կոմունիստներ, կամ  
վողջ կուսկազմակերպության 97,8 տոկոսը:  
Հարգելի պատճառներով գտման չենթարկե-  
վեցին 462 կոմունիստներ, կամ 0,5 տո-  
կոսը: Այստեղ մտնում են հիվանդ ըն-  
կերները, գործուղման մեջ գտնվողները, իսկ  
կարող ե պատահել և այնպիսիները, վորոնք  
գործուղումներում են գտնվում այն պատ-  
ճառով, վորպեսզի հեռու մեան մեր գտու-  
մից (Միծաղ):

Յեվ, վերջապես, դտման չեկան անհար-

գելի պատճառներով 1.383 կոմունիստներ,  
կամ կուսկազմակերպությունների 1,7 տո-  
կոսը: Իա, ընկերներ, շատ մեծ թիվ ե: Իրա  
պատճառը, մեկ կողմից, կոմունիստների  
վատ հաշվառումն եր, հաշվառման մեջ էյին  
համարվում այն ընկերները, վորոնք կտր-  
ված էին կուսկազմակերպությունից և տա-  
րիներով անդամավճարներ չէյին մուծել:  
Այդ մարդիկը համարում էյին, վոր կարիք  
չունեն գտման գնալու, վորովհետև գիտեյին,  
վոր միևնույն ե կհեռացվեն կուսակցու-  
թյունից: Մյուս կողմից գտմանը յենթարկ-  
վելուց հրաժարվողների թվում մենք ունե-  
յինք այնպիսի մարդիկ, վորոնց ճիշտ չէին  
ընդունել կուսակցության մեջ: Յեվ անա  
այդ մարդիկ, գիտենալով, վոր կհեռացվեն  
կուսակցությունից, չներկայացան գտմանը:

Չտման յենթարկվածների թվից սկզբնա-  
կան հանձնաժողովները վտարել էյին ՀԿԿ(բ)  
10.154 անդամների, կամ 16,7 տոկոսը: Ռա-  
յոնական հանձնաժողովների մտցրած ուղ-  
ղումներից հետո, բողոքների քննարկման  
հետևանքով, ՀԿԿ(բ)-ից հեռացված ան-  
դամների քանակն իջավ մինչև 7624 հոգու  
կամ մինչև 12,5 տոկոսը, իսկ գտման յերկ-  
րային հանձնաժողովի մտցրած ուղղում-

ներից հետո — 6701 կամ զտումն անցած  
ՀԿԿ(Բ) անդամների ընդհանուր թվի 11 տո-  
կոսը:

Այժմ թեկնածուների մասին: Սկզբնա-  
կան հանձնաժողովները հեռացրել էյին 4.921  
թեկնածուների կամ 24,5 տոկոսը: Ռայո-  
նական հանձնաժողովների ուղղումներից  
հետո հեռացվածների թիվն իջավ մինչև  
4.347 հոգու, կամ 21,6 տոկոսի, իսկ յերկ-  
րային հանձնաժողովի ուղղումներից հե-  
տո, — 4224, կամ զտումն անցած թեկնա-  
ծուների ընդհանուր թվի 21 տոկոսը:

Ընդամենը հեռացված են (կուսանդամներ  
և թեկնածուներ միասին) սկզբնական հանձ-  
նաժողովների կողմից 15.075 կոմունիստ-  
ներ, կամ 18,6 տոկոսը:

Ռայոնական հանձնաժողովների կողմից  
(գանգատները քննարկելուց հետո) 11.971  
կոմունիստներ կամ 14,8 տոկոսը և յերկ-  
րային հանձնաժողովի կողմից (գանգաու-  
նելը քննարկելուց հետո յերկրամասում) —  
10.925 կոմունիստներ, կամ զտումն անցած  
կոմունիստների ընդհանուր քանակի 13,5  
տոկոսը:

Այ, տեսնում եք, ընկերներ, թե ինչքան  
վտարվածներ ունենք մենք: Ծիշո ե, այդ

թվի մեջ վորոշ ուղղումներ ե մտցնելու  
ստուգման հենարոնական հանձնաժողովը,  
սակայն այդ ուղղումն այնքան ել մեծ չի  
լինելու:

Այդ թվերից յերևում ե, վոր փոքր չե  
մեզ համար վոչ պետքական այն տար-  
րերի քանակը, վորոնք մտել են կուսակ-  
ցության մեջ, և մենք ձեզ հեա քիչ թե  
շաա մաքրեցինք կուսկազմակերպությունն  
այդ տարրերից:

Սկզբնական հանձնաժողովների կողմից վոր-  
պես քաղաքականապես վոչ բավարար գրա-  
գետներ կուսանդամությունից փոխադրվել  
են թեկնածուներ 4.820 մարդ, կամ 7,9  
տոկոս, ոայոնական հանձնաժողովների կող-  
մից (գանգատները ոայոններում քննարկելուց  
հետո) 4.651 և յերկրային հանձնաժողովի  
կողմից (գանգատները յերկրամասում քն-  
նարկելուց հետո) 4.641, կամ 7,6 տոկոս:  
Սկզբնական հանձնաժողովների կողմից կուս-  
անդամությունից համակրողներ են փոխա-  
դրվել 741 — 1,2 տոկոս, ոայոնական հանձ-  
նաժողովների կողմից — 671 և յերկրային  
հանձնաժողովի կողմից՝ 642 — 1,1 տոկոս:  
Վորպես քաղաքականապես վոչ բավարար  
գրագետներ, վոչ բավարար կարգապահներ

և վոչ տոկուններ կուսանդամությունից համակրող են փոխադրված՝ սկզբնական ղանձնաժողովների կողմից՝ 2.727—13,6 տոկոս, ռայոնական հանձնաժողովների կողմից (գանգատները ռայոններում քննարկելուց հետո) — 2.648 և յերկրային հանձնաժողովի կողմից (գանգատները յերկրամասում քննարկելուց հետո) — 2.643 կամ 13,2 տոկոս:

Վորսնց ենք, ընկերներ, մենք ձեզ հետ հեռացրել կուսակցությունից: Յես կտամ և այդ թվերը:

Մեր վիճակագրության մեջ կոմունիստների միջև կային և գյուղացի-մենասնտեսներ, վորոնցից հեռացված են 2 մարդ և գրված է, վոր դա կազմում է 100 տոկոս (Միծաղ): Կոլտնտեսականներ վտարված են 2.015 կամ զտումն անցած կոլտնտեսականների 23,4 տոկոսը: Գյուղխորհուրդների, կոլտնտեսությունների, գյուղսպառնկերությունների նախագահներ — 543, կամ զտումն անցած այդ աշխատողների 20 տոկոսը: Գյուղաանտեսական բանվորներ — 480, կամ 17,7 տոկոս, արդյունաբերական բանվորներ — 3.635, կամ 16,5 տոկոս, ծառայողներ — 2.954, կամ 13,0 տոկոս: Խորհրդա-

յին, արհմիութենական և անտեսական աշխատողներ — 657, կամ 12,2 տոկոս: Մասնագետներ — 262, կամ 9,5 տոկոս: Կուսկոմյերիտական աշխատողներ — 345, կամ 8,6 տոկոս: Ուսանողներ — 330 — 5,5 տոկոս և ուրիշները, վորոնք չեն մտնում հիշած խմբերի մեջ — 477 հոգի, կամ 21,7 տոկոս:

Հեռացվածների մեծագույն մասն ըստ կուսաստի — դա յերիտասարդ կուսանդամներ են և թեկնածուներ: Հեռացված կուսանդամների վոլջ կազմից 1929 — 33 թվերի ստաժ ունեն — 69,2 տոկոս, իսկ թեկնածուները հեռացվածների թվում կազմում են 21,6 տոկոս:

Ինչո՞ւ համար եյինք, ընկերներ, մենք կոմունիստներին հեռացնում կուսակցությունից: Հեռացվածների հիմնական մասսան (65,2 տոկ.) բաժանվում է յերեք խմբի — դա կուսակցության մեջ պասիվ լինելն է (կուսակցական պարտականությունների չրկատարելը, կուսժողովներ չհաճախելը, անդամավճար չմուծելը) — 26,4 տոկոս, հետեյալ խումբը — կուսակցության և պետության կարգապահությունը խախտելու համար — 19,9 տոկոս, իսկ յերրորդ խումբը —

դասակարգայնորեն անհարազատ և կուսակցութեան մեջ անցնելիս իրենց սոցիալական ծագումը ծածկողներ — 18,9 տոկոս: Ուրիշ պատճառներով հեռացման տուկոսն զգալիորեն ցած է: Այսպես կենցաղային և բարոյական այլասերում — 13,3 տոկոս, այլասերվածութուն և բուրժուական տարրերի հետ միանալը 8,6 տոկոս: Իսկ հետո զալիս են միավորներ՝ որինակ, յերկերեսանութեան համար հեռացված են 1,9 տոկոս: Այդ թիվն ինձ թվում է վոչ լրիվ: Յեթե գտման ժամանակ մեր կուսկազմակերպութեանները բուլշևիկյան ավելի զգաստութեան ցուցաբերեյին, այդ թիվը, հավանական է, ավելի բարձր կլիներ:

Այս թվերից յերևում է, վոր մեծ քանակութեամբ կոմունիստներ հեռացվել են՝ կուսակցութեան մեջ պասիվ լինելու համար: Ինչի մասին է խոսում այդ, ընկերներ: Այդ խոսում է այն մասին, վոր մենք ձեզ հետ վատ ենք աշխատել այդ կոմունիստներին հետ: Յերբ նայում ես այդ թվերին, ապա նրա մեջ, ինչպես լավ հայելու մեջ, տեսնում ես կուսկազմակերպութեան աշխատանքը: Առաջին թիվը խոսում է այն մասին, վոր մենք վատ ենք դաստիարակել կուսակցութեան

մեջ ընդունված յերիտասարդ կոմունիստներին, չենք հետևել նրանց, չենք աճեցրել նրանց և թույլ ենք տվել, վոր նրանք կտրվեն կուսկազմակերպութեաննրեց:

Յերկրորդ թիվը խոսում է այն մասին, վոր մենք վոչ բոլորովին մանրադնին կերպով ենք անցկացրել կուսակցութեան մեջ ընդունումը և թույլ ենք տվել, վոր մեր շարքերն անցնեն բավականին թվով դասակարգայնորեն անհարազատ տարրեր: Այդ է, ընկերներ, խոսում է կուսկազմակերպութեանների անբավարար աշխատանքի և մի քանի կուսկազմակերպութեանների դասակարգային զգաստութեան բթանալու մասին: Այդ մասին խոսում են նաև այն հեռացվածների թվերը, վորոնց 6,2 տոկոսը (719 մարդ) ծառայել են սպիտակ բանակում վորպես կամավորներ և 5,4 տոկոսը (635) ծառայել են ըստ գորահավաքի:

Հետևյալ թվերը, վորոնց վրա եյի ուզում գրավել ձեր ուշադրութեանը, ցույց են տալիս, թե վոր կոմունիստներին միջև եյին ավելի մեծ թվով քաղաքականապես անգրագետները: Յես ուզում եմ ասել, թե վորոնց ենք ավելի մեծ թվով փոխադրել ՀԿԿ (բ) անդամութեանից թեկնածուներ:

Ըստ սոցիալական կազմի, թեկնածու յեն փոխադրված՝ գյուղացիներ — 1.800, կամ 23,5 տոկոս, բանվորներ — 2.245, կամ 20,7 տոկոս, ծառայողներ — 202, կամ 17,9 տոկոս:

Վորոնց ենք ավելի մեծ թվով թեկնածուներից փոխադրել համակրողներ: Ըստ սոցիալական դրուժյան՝ բանվորներ փոխադրված են 1.482, կամ 13,7 տոկոս, գյուղացիներ — 999, կամ 13,0 տոկոս և ծառայողներ — 125, կամ 11,1 տոկոս:

Վեր կուսկազմակերպություններում եր ավելի վատ դրված կոմունիստներին, կուսակցություն յերիտասարդ անդամներին և թեկնածուների դաստիարակության աշխատանքը, վորոնք դրա հետևանքով կորցնում էյին իրենց կապը կուսկազմակերպության հետ, վոչ մի կուսաշխատանք չէյին տանում և դրանով իսկ մեխանիկորեն դուրս էյին ընկնում կուսակցությունից: Դրանք այն ընկերներն են, վորոնցից կարող էյին դուրս գալ և վոչ վատ կոմունիստներ, յեթե կուսկազմակերպություններն աշխատեյին նրանց հետ, իսկ զաման ժամանակ մենք ստիպված յեղանք հեռացնել այդ ընկերներին կուսակցությունից պասիվության համար: Կոմու-

նիստների վեր խմբի միջից էյին ավելի մեծ թվով հեռացված պասիվություն համար: Բանվորներից (բացի գյուղատնտեսական բանվորներից) — 1.522, կամ 41,9 տոկոս (հեռացված բանվորների), գյուղատնտեսական բանվորներից (խորհրտակցություններում, ՄՏ կայաններում և ԿԱՑ-երում) — 140, կամ 29,2 տոկոս, կոլտնտեսականներից — 535 կամ 26,5 տոկոս, ծառայողներից — 532, կամ 18 տոկոս, ուսանողներից — 42, կամ 17,7 տոկոս, մասնագետներից — 24, կամ 9,2 տոկոս, կուսկոմյերիտական աշխատողներից — 26, կամ 7,6 տոկոս:

Վերջապես, վերջինը, վորի վրա էյի ուղում գրավել ձեր ուշադրությունը, դա այն է, թե ում միջից էյին ավելի մեծ թվով հեռացված դասակարգայնորեն անհարազատ և մեզ թշնամի տարրեր: Դասակարգայնորեն անհարազատ տարրերն ամենից շատ դուրս յեկան բարձրագույն դպրոցների կուսկազմակերպություններում, այդ խմբի ուսանողներից հեռացվեցին 128 մարդ, կամ 38,3 տոկոս: Ապա գալիս են ծառայողները — 20 տոկոս և հետո արդեն բանվորները — 19 տոկոս: Այդ թվերն ասում են մեզ այն մասին, վոր մենք մեր հայացքները պետք է

դարձնենք մեր դպրոցներին: Յես չեմ ուզում ասել, Վոր մեր ԲՈՒՀ-երում սովորում են վատ ընկերներ: Դա կլիներ սխալ, այնտեղ կան շատ լավ սովորք: Չե՛ վոր մենք լավագույններից ամենալավագույններին ենք ուղարկում ԲՈՒՀ-երը և գիտենք, Վոր մեր ուղանողության ընդհանուր կազմը վատ չե, բայց գիտենալով այդ, մենք քիչ ենք այնտեղ լինում, իսկ մեր թշնամիներն ոգտվում են դրանից և սողոսկում այնտեղ:

Անցնում եմ ռազմական կուսկազմակերպությունների գտման արդյունքներին: Այդ կուսկազմակերպությունները մեր լավագույններն են և գտման տակտան այստեղ զգալիորեն ցածր ե, քան քաղաքացիական կուսկազմակերպություններում: Բանվորա-գյուղացիական կարմիր բանակի ռազմական կուսկազմակերպություններից գտման սկզբնական հանձնաժողովները հեռացրել են ՀԿԿ(բ) անդամների 3,9 տոկոսը, թեկնածուների — 7,6 տոկոսը, իսկ ընդամենը վտարված ե կոմունիստների (անդամներ և թեկնածուներ միասին) 4,9 տոկոսը: Փոխադրված են կուսանդամությունից թեկնածուներ 20 տոկ. և կուսթեկնածությունից համակրողներ — 0,1 տոկոս:

Գանդաաները քննարկելուց հետո մտցվեց վորոշ ուղղում՝ բանվորա-գյուղացիական կարմիր բանակի և Ներքին գործերի ժողկուսառի սահմանադրականության կուսկազմակերպություններից հեռացված են կուսանդամների և թեկնածուների 4,4 տոկոսը, փոխադրված են կուսանդամությունից թեկնածուներ 2,0 տոկոսը, թեկնածուներից փոխադրված են համակրողներ 2,4 տոկոս: Տեղում եք, վոր այստեղ տոկոսը մեծ չե, և դա շատ լավ ե, դա հիանալի յե: Այդպես ստացվեց վոչ թե այն պատճառով, վոր այնտեղ վատ ելին գտում: Այնտեղ ևս վատ չելին գտում, բայց մենք այնտեղ ունենք կուսկազմակերպությունների ավելի լավ կազմ: Մեզ մոտ, ինչպես արդեն հիշեցի վերը, մեծ թվով մարդիկ գտմանը չներկայացան: Ինչպիսի կոմունիստներ հրաժարվեցին գտումից: Յես՝ ուզում եմ բերել միայն մի որիմակ: «Կրասնի Հիդրոպես» գործարանում անհարգելի պատճառով չներկայացավ զրամանը տասնապետ կոզարենկոն: Կոզարենկոն — կուսանդամ ե 1924 թվից — համարվում եր գործարանում վորպես կոմունիստ և կուսկազմակերպությունը նրանուում մտցրել եր գտման յենթարկվողների ցուցակի

մեջ: Սակայն կողարենկոն հրաժարվեց ներկայանալ գտմանը հետևյալ դիմումը տալով գտման հանձնաժողովին՝ «Մնորում եմ ինձ ՀԿԿ(բ) անդամ չհամարել: Յես անդամավճարներ չեմ մուծել 4 տարվա ընթացքում և այդ պատճառով չեմ ուզում գտման յեթարկվել»: «Չեմ մուծել անդամավճարները և այդ պատճառով, — ասում ե, — չեմ ուզում գտման յենթարկվել»: Բոլորովին պարզ է, թե ինչու չի ուզում, վորովհետև միևնույն է կհեռացվեր կուսակցությունից:

### Ե՛Ն ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՉԳԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Ընկերներ, յես սկզբում ասացի, վոր գտումը մեծ ոգուտ տվեց մեր կուսակցությանը, բայց տեղ-տեղ մենք ձեզ հետ միասին բավականաչափ զգաստ չեյինք գտման ժամանակ: Մենք կուսակցությունից հեռացրինք բազմաթիվ պասիվ և խորթ տարրեր, վորոնք սողոսկել էյին մեր շարքերը, բայց և այնպես տեղ-տեղ մենք ձեզ հետ միասին բոլորովին չգտեցինք: Յես ուզում եմ ասել յերկերեսանիների մասին, վորոնց մենք ամեն տեղ չկարողացանք նկատել և մերկացնել:

Չե վոր մենք ժամանակին վատ չպայքարեցինք ամեն տեսակի ոպողիցիոներների դեմ: Կուսակցությունն այս պայքարում աճեց, կոփվեց և իսկապես դարձավ լենինյան-ստալինյան կուսակցություն: Նրանից հետո յերբ մենք ջախջախեցինք բոլոր ոպովիցիաներին, շատ ոպողիցիոներներ զղջացին և խոստովանեցին իրենց սխալները և հետո նրանցից վոմանց մենք նորից կուսակցութան մեջ ընդունեցինք: Իսկ յերբ նրանք կուսակցություն վերադարձան, մենք մոռացանք նրանց մասին: Աշխատում են իրենց համար, և վոչինչ, — քանի վոր ընդունված են, նշանակում է կուսակցության անդամ են, և դրանից հետո, նրանցից վոմանց նույնիսկ առաջ քաշեցինք կուսակցական ղեկավար աշխատանքին: Իսկ հետո ինչ դուրս յեկավ դրանից: Դուրս յեկավ այն, վոր մի քանի նախկին ակտիվ տրոցկիստներ, զինովյեվականներ, կուսակցություն մտնելով, չգաղարեցին իրենց զրգվելի հակահեղափոխական աշխատանքը և, գտնվելով կուսակցության մեջ, զբաղվեցին յերկերեսանիությամբ: Յես կարծում եմ, թե չարժի այս հարցի վերաբերյալ ձեզ բազմաթիվ որինակներ բերել: Այդ դեպքերին դուք ինքներդ լավ ծանոթ եք: Մեր հանցանքն այն

ե, վոր զտման ժամանակ վոչ ամեն տեղ կարողացանք մերկացնել այդ յերկերեսանիններին:

Վերջնենք թեկուզ մեր Յերկրպլանը: Միայն զտուժից հետո հաջողվեց հայտաբերել, վոր այնտեղ կան յերկերեսանիններ, իսկ նույնիսկ նրանցից մեկին — Գրիգորեին, — կուսկազմակերպութունը մտցրել եր զտման հանձնաժողովում: Իսկ ինչո՞ւ դա այդպես յեղավ: Նրա համար, վոր մեզ մոտ տեղ տեղ բթացել եր բոլջևիկյան զգաստությունը, տեղտեղ այսպիսի մարդկանց զտմանը մեզ մոտ չվերաբերվեցին ինչպես վոր պետքն եր:

Այս բանը մենք պետք ե խոստովանենք և ասենք, վոր այդ մեր թերությունն ե յեղել: Զտուժից հետո, առանձնապես շատ այսպիսի թերություններ հայտաբերվեցին մեր ԲՈՒՀ-երի կուսկազմակերպություններում: Չե վոր փաստ ե այն, վոր յերկրամասի մի ամբողջ շարք ԲՈՒՀ-երում պարզվել եր, վոր նախկին ոպտղիցիոներները, լինելով դասատու, առաջ եյին քաշում այնպիսի հայացքներ, վորոնք թշնամի եյին մեր կուսակցությանը և խորհրդային իշխանությանը, իսկ ԲՈՒՀ-երի կուսկազմակերպություններն այդ բանը չեյին նկատում և զտման ժամանակ չկարողացան մերկացնել:

Դա ինչի՞ց եր առաջ գալիս: Միայն նրանից, վոր մենք վատ ենք ճանաչում մեր կուսուժնիստներին: Մենք չգիտենք, թե ո՞վ ե, նա, վորտեղից ե յեկել նա կուսկազմակերպություն, ինչպես, ե նրա՞ անցյալը, արդյոք ճիշտ ե պատմում նա իր ինքնակենսագրությանը, թե վոչ: Կուսկազմակերպությունները չեյին ստուգում այդ բանը, ամեն ինչում մարդուն հավատում եյին խոսքով, այդ պատճառով ել մեզ մոտ պատահում եյին այնպիսի դեպքեր, վորոնց մասին յես ցանկանում եմ ձեզ պատմել:

1935 թվի հունվար ամսին մեր յերկրային զտման հանձնաժողովին դիմեց կուսակցության անդամ, Կրասնոդարի միլիցիայի բաժանմունքների հրամանատար Ֆրիդմանը և խնդրեց իր հաշվեքարտի պատճենի վրա փակցնել դրոշմանի՞շ՝ զտուժն անցնելու մասին, վորովհետև իբր թե ինքը ուշագնացության (ընկնավորության) ժամանակ պատուել ե իր հաշվեքարտի իսկականը: Դրոշմանի՞շ փակցնելուց առաջ, վորոշեցինք ստուգել նրան: Յե՞վ ի՞նչ դուրս յեկավ: Դուրս յեկավ այն, վոր նա դեռ 1933 թվին Կրասնոդարի քաղկոմի կողմից հեռացված եր կուսակցությունից՝ աշխատանքային կարգապահությունը

սխտեմատիկորեն խախտելու համար, բայց կուստոմսը նրանից չեյին վերցրել: Ահա տեսնում եք, վոր նրան կուսակցութունից հեռացրել են, իսկ կուստոմսը նրա մոտ են թողել: Իմանալով կուսակցութունից հեռացվելու մասին, Փրիդմանը յեկավ Հյուսիսային Կովկաս, ցույց տալով իրեն վորպես կուսակցության անդամ, աշխատանքի անցավ, վորպես յերկաթուղային պահպանության բաժանմունքի հրամանատար՝ Հյուսիսային Կովկասի յերկաթուղու Պրոխլադնայա կայանում: Դրանից հետո նա խաբեբայության միջոցով Հյուսիսային Կովկասում անցավ կուսգտումը, ցույց տալով իր ինքնակենսագրության մեջ, վոր ինքը 1917 թվից մինչև 1922 թիվը ծառայել է Կարմիր բանակում, վոր ինքը պարզևատրված է Լենինի շքանշանով, Կարմիր դրոշի շքանշանով, հեղափոխական զինքով, կարմիր պարտիզան է և հանրապետական թոշակառու: Տեսնում եք, ինչ վոր պետքն է, հնարել է (Միծաղ): Բնորոշ է այն, վոր յերբ Փրիդմանն անցավ Հյուսիսային Կովկասյան յերկաթուղու պահպանության աշխատանքին, յերբ նրան ընդունեցին կուսկազմակերպության մեջ, և յերբ Հյուսիսային Կովկասում յենթարկվեց կուս-

գտմանը, վոչ վոր չկասկածեց այս «կոմունիստի» յերևակայական ծառայությունների մասին, վորը թե շքանշան ունի, թե զենք, թե Կարմիր բանակումն է յեղել, իսկ ինքը, բանից դուրս է գալիս, վոր ծնվել է միայն 1904 թվին: Ճշմարիտ է, նա ուներ ինչվոր կեղծ պատվոգրեր, և հենց այդ կեղծ պատվոգրերին էլ հավատացել են: Իսկ յերբ այստեղ մենք փորձեցինք ստուգել այդ Փրիդմանին, ապա նա իսկույն խոստովանեց, վոր խաբել է կուսակցությանը և իր բոլոր ծառայությունները կեղծ են:

ԿՈՍՏՆԻՍՏՆԵՐԻ ԴԱՍՏԱՐԱԿՈՒՅՅՈՒՆԸ —  
ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՅՅՈՒՆՆԵՐԻ  
ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԽՆԴԻՐՆ Ե

Այժմ յես ցանկանում եմ խոսել այն մասին, թե ինչպես եր զրված կոմունիստներին դաստիարակելու աշխատանքը: Զոման փամանակ մենք հանդիպեցինք մեծ թվով քաղաքականապես անգրագետ կոմունիստներին, կուսկազմակերպությունները բավական ուշադրություն չեյին դարձրել կոմունիստների ուսուցման վրա — աչքաթող եյին արել այս բնագավառը: Մենք ձեզ հետ

միասին իսկապես վոր հուշ տվինք աշխատանքի սնտեսական կողմը, և կարողանում ենք արդեն լավ աշխատել, բայց մոռացանք մեր կուսակցական գործի, կոմունիստների քաղաքական դաստիարակության մասին: Շատ կուսկազմակերպություններում կոմունիստների ուսուցումը ձևական հիմքի վրա յեր դրված: Յես չեմ ուզում ձեզ ծանրաբեռնել որինսակներով, բայց մենք հանդիպում եյինք շատ այնպիսի կոմունիստներին, վորոնք նույնիսկ թերթ չեն կարդում: Իսկ ի՞նչ դուքս կդա այսպիսի կոմունիստից: Հավանաբար մի քանիսը կասեն, թե կան այնպիսի կոմունիստներ, վորոնք չեն կարողանում թերթ կարդալ, ժամանակ չունենալու պատճառով: Յես այդ բանին չեմ հավատում: Չկա և չի կարող լինել այնպիսի մի մարդ, վորը չկարողանա ժամանակ գտնել՝ թերթ կարդալու համար: Յեթե այդպիսի մի մարդ թերթ չի կարդում, ապա նա ի՞նչպես կարող ե քաղաքականապես գրագետ լինել: Այն ժամանակ նա ի՞նչ կոմունիստ ե: Ի՞նչ գիտե նա: Այսպիսի կոմունիստ անպետք ե և նա մեզ հարկավոր չե: Իսկ ինչպես եր դրված մեզ մոտ քաղուսուցումը: Յես ուզում եմ բերել մի

փաստ, վոր կարող ե պատահել արդեն հնացած ե, քանի վոր Լենինգրադի քաղկոմի պլենումի վորոշումից հետո, դուք հավանաբար հսկայական աշխատանք եք կատարել կուսգաստիարակությունը՝ կարգավորելու ասպարիզում, բայց և այնպես յես կարծում եմ, վոր չեմ սխալվի, յեթե ասեմ, վոր հիմա յել տեղտեղ այս գործը դեռ ձևական հիմքի վրա յե դրված: Ճիշտ ե, գտումից հետո դա կարող ե այլևս չկրկնվել, բայց այսպիսի փաստ յեղել ե:

Հարավ Արևելյան յերկաթուղու Մորոզովի յերկաթուղային հանգույցի կուսկազմակերպության մեջ կուսուսուցումը տարվում եր, այսպես կոչված՝ «սողացող մեթոդով»: Են ել վոնց են հնարել — «սողացող մեթոդ» (Միծաղ): Այդ նշանակում ե, վոր յեթե խմբակը կազմակերպված ե 30 մարդու համար, ապա պարապմունքներին զալիս եյին վոչ թե այս խմբակի բոլոր անդամները, այլ բոլոր կոմունիստները հերթով: Իրա հետևանքով խմբակում մարդիկ ամեն որ փոխվում եյին և արդյունքն այն եր լինում, վոր բոլորը սովորում եյին քիչ-քիչ, իսկ ընդհանրապես վոչ վոք վոչինչ չհասկացավ: Այս կազմակերպության 143 ստուգ-

վորներին 90 սովոր բոլորովին չգիտեին 17-րդ կուսհամագումարի վորոշումները: Ահա ձեզ ուսուցում: Իսկ չե՞ վոր սա խայտառակութունն է, ընկերներ: Այսպիսի ուսուցումից հետո, բանը մինչև այնտեղ հասավ, վոր ճախարակագործական ցեխում կոմունիստներին և վոչ մեկը չկարողացավ գեկուցել 17-րդ կուսհամագումարի վորոշումների մասին, և ստիպված յեղանք այդ մասին խնդրել մի անկուսակցական բանվորի, վորը կուսժողովում գեկուցեց մեր կուսհամագումարի վորոշումների մասին (Փիժաղ): Սա ի՞նչ է ցույց տալիս, ընկերներ: Այն, վոր քաղաքական կարևորագույն գործը մեզ մոտ յերբեմն ձևականորեն է կատարվում: Յեթե հարց տրվի կուսկազմակերպությանը, թե ինչպես է դրված ձեզ մոտ քաղուսուցումը, ապա պատասխանում են, վոր խմբակը կազմակերպված է, բոլորը հաճախում են ուսուցմանը: Իսկ ի՞նչ է ստացվում դրանից: Շատ կուսկազմակերպություններ չգիտեն, քանի վոր մեզ մոտ քիչ են ստուգում այս աշխատանքը:

Ահավասիկ մի ուրիշ որինակ, վորը ցույց է տալիս, թե մեզ մոտ յերբեմն ինչպե՞ս են մոտենում պրոպագանդիստներ նշանակելու

գործին: Յես ուզում եմ խոսել Տագանրոզի մասին: Տագանրոզի կազմակերպությունը վատ կազմակերպությունն չէ, բայց արի տես, վոր պրոպագանդիստների ընտրությունն այնտեղ անբավարար եր: Անդրեևի անվան գործարանում 72 պրոպագանդիստներից միայն 19 ընկերներ էին կարողանում ինքնուրույն աշխատանք կատարել կոմունիստների ուսուցման ասպարիզում, իսկ թե ի՞նչ էին ներկայացնում իրենցից մնացած պրոպագանդիստները, — այդ բանը վոչ վորի հայտնի չեր: Պրոպագանդիստների կազմում կային այնպիսիները, ինչպես որինակ, Մակեյեվը, 1926 թվից կուսանդամ, վորը գտման ժամանակ չկարողացավ նույնիսկ պատասխանել, թե ի՞նչ տարբերություն կա մեր կուսակցության կանոնադրության և ծրագրի միջև: Այսպիսի մի մարդ ինչպե՞ս կարող է պրոպագանդիստական աշխատանք տանել: Նա ինչպե՞ս կարող եր ղեկավարել քաղուսուցումը, քանի վոր ինքը դեռ կարիք ունի սովորելու:

Ահա ձեզ այն յերկու պատճառները, վորոնց շնորհիվ մեզանում կոմունիստները քաղաքականապես անգրագետ դուրս յեկան: Մի կողմից՝ վատ էին կազմակերպում

ուսուցումը, իսկ մյուս կողմից՝ վատ եյին շոկում պրոպագանդիստներին:

Հավ պրոպագանդիստը պետք է լինի նաև լավ կազմակերպիչ: Գիտեք, թե ինչ մեծ գործ է լավ պրոպագանդիստ լինելը: Հավ պրոպագանդիստը պետք է իմանա, թե ինչպես է հարկավոր կազմակերպել սովորողների խումբը: Հարկավոր է ընտրել գիտելիքների համաձայն, և յեթե դուք ընտրում եք քաղ-գրագիտության զանազան մակարդակ ունեցողների խումբ— մեկն ավելի յե իմանում, մյուսը՝ քիչ, — ապա հասկացեք, ընկերներ, դասավանդողը ստիպված է լինելու հարմարվել քիչ գիտցողներին, իսկ այն կոմունիստը, վորն ավելի շատ է իմանում, նա մտածում է. «Այս յերեկոն կարող եմ բաց թողնել, բանի վոր յես այդ բոլորը գիտեմ», և չի գնում պարապմունքի՝ այն պատճառով, վոր նա ձանձրանում է այնտեղ նստելուց: Մի յերեկո բաց թողնելն արդեն վարակիչ է: Բավական է հենց վոր մի յերեկո չգնա, մյուս յերեկոն ել չի գնա: Յեվ այդպես իրար հետևից:

Յեթե պրոպագանդիստը չի կարողանում կազմակերպել իր խմբակի պարապմունքները, չի կարող ճիշտ ընտրել ունկնդիրներին եր

դպրոցի համար, ապա ուսումը չի կարող լավ արդյունքներ տալ: Բերում եմ մի որինակ ևս, թե ինչպես եր կազմակերպված քաղուսուցումը Տագանրոգի «Կրասնի կո-սյուլեյիկ» գործարանում: Հիրավի, կարող է պատահել, վոր այդ բանը հիմա չկա, բայց դա յեղել է արդեն զտումից հետո: Դպրոցի պարապմունքները տեղի եյին ունենում փոքր, նեղ սենյակում, վորտեղ դրված եր չորս սեղան, իսկ սենյակն աղտոտ եր, հատակին թափթփված եյին ծխախոտի մնացորդներ, պատուված թղթեր: Շոգից շենքի ողը հեղձուձիչ եր դառել, աթոռները չեյին բավականանում, չորս ունկնդիրներ նստում եյին սեղանների վրա, վորոնց հետևում պարապմունքներ եյին տեղի ունենում: Ինքը՝ պրոպագանդիստ Սվինարեը և բոլոր ունկնդիրները նստում եյին գլխարկով և առանց վերարկունքները հանելու: Հենց այստեղ ել բոլորը ծխում եյին, վորովհետև դրան որինակ եր տալիս հենց ինքը՝ պրոպագանդիստը: Ունկնդիրների մեծ մասն առանց տետրակների և մատիտների յեր պարապում և նրանցից վոչ մեկը դասադիրք չուներ: Պրոպագանդիստը պարապմունքներին չեր պատրաստվել, պարապմունքների պլան չուներ և

կենդանի զրույցի փոխարեն, միապաշարք և ճանճարալի կերպով ունկնդիրներին կարդում եր պատահաբար ձեռքն ընկած քաղզրագիտության դասագրքի առանձին հատվածները: Պարզ ե, վոր ունկնդիրները հաճույքով չեն գնում այսպիսի պարապմունքներին և հաճախ պրոպագանդիստի կարդացածից փոչինչ չեն հասկանում: Այս որինակը յես բերի նրա համար, վորպեսզի ցույց տամ ձեզ, ընկերներ, թե ինչքան մեծ գործ ե ճիշտ կազմակերպված ուսուցումը: Չե՞ վոր քաղզպրոցի պարապմունքներին մարդիկ գալիս են փոչ թե Սաղովայա փողոցում զբոսնելուց, այլ աշխատանքից, դժվար աշխատանքից, հոգնած, և վորպեսզի դպրոցի ունկնդիրը կարողանա յուրացնել ուսումը, նրան հարկավոր են վորոշ պայմաններ:

Ճիշտ ե, կարող ե պատահել, վոր այժմ կոմունիստների ուսուցումը կազմակերպելու գործում դուք շատ բան եք ուղղել, բայց յես կարծում եմ, վոր տեղ-տեղ կան այնպիսի փաստեր, յերբ ուսումը դեռ մինչև այժմ ձեական հիմքի վրա յե դրված:

Կուսակցության կենտկոմը և անձամբ ընկ. Սալիկն անագին ուշադրություն են դարձնում կոմունիստների ուսուցման և

դաստիարակման գործին: Վերջերս կենտկոմի կուլտպրոպը բաժանվեց մի քանի բաժինների: Այդ աբված ե նրա համար, վոր մեր կազմակերպությունն զգալիորեն աճել ե և մեր առաջ դրված են ավելի մեծ խնդիրներ: Առաջ մեզ մոտ քիչ 'թերթեր կային, իսկ այժմ թերթերը հրատարակվում են համարյա ամեն մի գործարանում, յուրաքանչյուր գյուղական ռայոնում, և՛ բազմատիրափներ, և՛ պատի թերթեր, աճում են թատրոնները, աճում են աշխատավորների կուլտուրական պահանջները: Մենք պետք ե այս բոլորն ընդգրկենք: Մեր կուսակցական աչքը պետք ե լինի ամեն տեղ: Այս մեծ կուլտուրական գործը մենք այնպես պետք ե կազմակերպենք, վորպեսզի դա ձեական չլինի: Մենք առանձին ուշադրություն պետք ե դարձնենք կոմունիստների կուլտուրական-քաղաքական դաստիարակությանը: Բաղաքականապես անգրագետ և անկուլտուրական մարդը չի կարող բոլշևիկ լինել: Բանի վոր նա կոմունիստ ե, ապա նա իր կուլտուրական մակարդակով ավելի բարձր պետք ե լինի, քան շարքային անկուսակցական բանվորը, նա քաղաքականապես ավելի զարգացած պետք ե լինի: Իսկ այն կոմունիստները, վորոնք չեն

ցանկանում բարձրացնել իրենց կուլտուրա-  
կան և քաղաքական մակարդակը, նրանք այդ  
գործում հետ են մնում անկուսակցական ըն-  
կերներին, այդպիսի կոմունիստներին մենք  
չենք կարող թողնել մեր շարքերում:

Աշխատանքի այս կողմի վրա մեզ հար-  
կավոր ե ամենալուրջ ուշադրություն դարձ-  
նել: Այստեղ լոկ խոսակցություններով և մի  
որով վոչինչ չես անի՝ Իրա համար հարկա-  
վոր ե ամենօրյա և հմուտ աշխատանք:

Այժ յես ուզում եմ յերկու խոսք ասել  
կանանց մասին: Յերկրային կուսկազմակեր-  
պությունն ունի ընդամենը 13.115 կին:  
Նրանցից 8.988 կուսանդամ են, իսկ 4.127  
թեկնածու: Նրանցից հեռացված են մեծ քա-  
նակությամբ: Կուսանդամներ — 10,9 տոկոս,  
թեկնածուներ — 21,6 տոկոս: Ընդամենը հե-  
ռացված ե 14,3 տոկոս:

Ամենից ավելի (49,4 տոկոս) հեռացված  
են կանայք պասիվության համար: Այս  
ցույց ե տալիս, ընկերներ, վոր, մենք, ձեզ  
հետ միասին բավարար աշխատանք չենք  
տանում կանանց միջև: Նկատի ունեցեք,  
վոր կանանց դժվար ե աշխատել, քան տղա-  
մարդկանց, իսկ մենք, չնայած դրան, նրանց  
հետ քիչ ենք զբաղվում: Մենք ավելի զգա-

յուն, ավելի ուշադիր մոտեցում պետք ե  
ունենանք կանանց հանդեպ: Մենք ամեն  
կերպ աշխատում ենք կնոջը թեթևացնել  
անային հոգսերից: Մենք կազմակերպում  
ենք ճաշարաններ, մանկամտուրներ և այլն,  
բայց և այնպես տանը կանայք ավելի շատ  
աշխատանք ունեն, քան տղամարդիկ:

Նա անային ավելի շատ հոգսեր ունի,  
ուստի նրա համար ավելի դժվար ե պարա-  
պել իր վրա և նույնիսկ ամեն ժամանակ  
նա չի կարողանում թերթ կարդալ: Այդ  
իսկ պատճառով ել կուսկազմակերպու-  
թյունները կանանց պետք ե մոտենան ավելի  
զգայուն և ավելի ուշադիր կերպով: Մենք  
կարող ենք բերել կանանց բացառիկ լավ  
աշխատանքի հազարավոր որինակներ թե  
ստորին և թե ղեկավար աշխատանքում:  
Մենք գիտենք, թե ինչպես լավ են աշխա-  
տում կանայք մեր գործարաններում և կու-  
տնտեսություններում: Բայց մենք միշտ չե,  
վոր զգայուն և ուշադիր ենք վերաբերվում  
նրանց հանդեպ:

Վերցնենք թեկուզ Տազանրոզի ուայոնի  
կազմակերպության վերաբերմունքը դեպի  
կանայք: Ընկ. Լիյմանն անցյալում վորպես  
կշոող եր աշխատում կորտնտեսություննե-

այնպիսի կուսկազմակերպութիւն, վորտեղ  
ճիշտ գրոված լիներ կոմունիստների հաշվա-  
ռումը: Համարյա բոլոր կուսկազմակերպու-  
թյուններում մեծ տարբերութիւն կար կո-  
մունիստների ցուցակի և իրական կազմի  
միջև: Սրա հետևանքով գուման սկզբին յերկ-  
րամասում հաշվառքից դուրս հանվեց 6.872  
մարդ կամ կուսկազմակերպության կազմի ?  
տակոսը, այսպես կոչված «մեռած հոգիները»:

Շախտի կուսկազմակերպության մեջ յե-  
րևան հանվեցին 1.373 մեռած հոգիներ, կամ  
կուսկազմակերպության կազմի 17,2 տո-  
կոսը: Պավլովսկի ռայոնում հաշվառքից ջրն-  
ջվեցին 222 «մեռած հոգիներ», կամ 22  
տոկոսը: Լաբինսկի ռայոնում հաշվառքից  
դուրս հանվեց 305 կոմունիստ կամ 15 տո-  
կոսը և այլն: Բացի դրանից, մի շարք ռա-  
յոններում հայտարարված էին այնպիսի կո-  
մունիստներ, վորոնք յերկար ժամանակ աջ  
խատում էին ռայոնում, բայց վոչ մի տեղ  
հաշվառքի չէին առնված: Բելորեչենսկի  
ռայոնում կային 48 այսպիսի կոմունիստ-  
ներ, Գիլենշիկի ռայոնում — 18, Լաբինսկի  
ռայոնում — 20, Ռոստովի Լենինյան ռայո-  
նում — 50, Սալսկում — 90, Հյուսիսային  
Դոնյան շրջանում — 249 և այլն:

Կոմունիստների հաշվառման վատ դրու-  
թյունը բացատրվում է, գլխավորապես, կու-  
սակցության ռայկոմների և քաղկոմների  
կողմից դեպի այս գործը ցույց տրված ան-  
փութ վերաբերմունքով: Զուման հանձնա-  
ժողովները հայտնաբերեցին: ռայկոմների և  
քաղկոմների հաշվառքում յեղած մեծ թվով  
այնպիսի կոմունիստներ, վորոնք չունեին  
կուստոմսեր, թեկնածվական քարտեր կամ  
հաշվեքարտեր: Այսպիսի կոմունիստներ կա-  
յին Տիմաշևսկի ռայկոմում 120 մարդ, Ստա-  
րո-Սինսկի ռայկոմում — 51, Տիխորեցկի  
ռայկոմում 23 մարդ և այլն:

Իեպի կոմունիստների հաշվառքն յեղած  
անուշադիր վերաբերմունքի բնորոշ որինակ  
կարող է ծառայել Կոնստանտինովսկի ռայ-  
կոմը, վորտեղ առանձին կոմունիստների  
հաշվաքարտերի իսկականները դրված էին  
քարտերի արկղի մի բաժնում, իսկ այդ  
քարտերի պատճենները գտնվում էին մյուս  
բաժնում, վորի հետևանքով միևնույն կո-  
մունիստները յերկրորդ անգամ էին հաշվե-  
առնվում և գտում անցնելու համար մրտ-  
ցված էին յերկու տարբեր կուսկազմակեր-  
պությունների յերկու ցուցակներում:

Զուումը ցույց տվեց, վոր համարյա բո-

լոր սկզբնական կուսկազմակերպություններում կուսկոմիտեների քարտուղարները և կուսկազմակերպիչները չեյին հետևում կոմունիստների հաշվառմանը, և հաճախ իրենք եյին խախտում հաշվառքի կանոնը: Որինակ, Լենգործարանում կոմունիստների հաշվառքը սանում եր մի այնպիսի կոմյերիտուհի, վորը ծանոթ չեր հաշվառքի աշխատանքին: Կենդանի կոմունիստների հաշվեքարտերն ամբողջ ժամանակ պահվում եյին փոքր փայտե արկղում, վորը հեշտությամբ կարելի յեր վերցնել թիի տակ և տանել: Բացի դրանից, Լենգործարանի կուսկոմում պատուհանում, չփակվող արկղում ընկած եյին այն կոմունիստների 500 իսկական հաշվեքարտերը, վորոնք դուրս եյին հանված կուսակցությունից կամ «մեռած հոգիներ» եյին համարվում: Վորևե գող կարող եր իր համար շոկել ուզած քարտը, հայտարարել կուստոժսը կորցնելու մասին և ցույց տալ իրեն վորպես կուսակցության անդամ:

Կուսկազմակերպիչները և կուսկոմիտեների քարտուղարները վոչ միայն չեյին հետևում կոմունիստների ճիշտ հաշվառմանը, այլ հաճախ իրենք նույնիսկ չեյին գտնվում կուսակցական հաշվառքում: Սալսկայա ՄՏ կա-

յանի կուսկազմակերպիչ Բոգդանովը և Ցելինսկայա ՄՏ կայանի կուսկազմակերպիչ Պոնոմարևը մի տարուց ավելի յե, ինչ հաշվի չեյին առնված Սալսկու ռայկոմում և կուսակցական հաշվառքում ընդունվեցին միայն գոման սկզբում: Լենուայոնի № 313 շինարարական մասի կուսկոմի քարտուղար ընկ. Վակուլինը մեկուկես տարի իր կուսկազմակերպության հաշվառքում չեր գտնվում:

Ահա տեսնում եք, ընկերներ, յեթե մեզ մոտ կուսհաշվառքում չեյին գտնվում իրենք՝ կուսկազմակերպիչները և կուստոյկոմիտեների քարտուղարները, ապա այսպիսի կուսկազմակերպություններում վոչ մի հաշվառք չի կարելի լավ հիմքի վրա դնել: Իսկ ինչպե՞ս կարելի յե այդ դեպքում կուսկազմակերպության մեջ կարգ մտցնել, յերբ վատ ե դրված կոմունիստների հաշվառքը: Այսպիսի պայմաններում կարելի յե արդյոք ճանաչել կոմունիստներին: Փորձեցեք վորևե տնտեսության մեջ հաշվառք չկատարել, և դուք իսկույն կքայքայեք այդ տնտեսությունը: Յե՛վ անա մենք հաշվի չեյինք առնում կուսհաշվառքը, մեր «կուսակցական տնտեսությունը», մեր կոմունիստներին, կենդանի մարդկանց, և այդ պատճառով ել

մենք չեյինք ճանաչում կուսկազմակերպու-  
թյունը, իսկ քանի վոր մենք չեյինք ճանա-  
չում մեր կազմակերպությունը, ապա մենք  
չեյինք ել կարող ճիշտ դասավորել մեր  
ուժերը, ճիշտ կազմակերպել կուսկազմա-  
կերպության աշխատանքը:

Անցնում եմ կուսակցական փասթաթղ-  
թերի պահպանման հարցին: Յեթե մեզ մոտ  
չլիներ լավ հիմքի վրա դրած կուսհաշվառք,  
յեթե մենք հարկ չեղած չափով չհետևեյինք  
կուսակցական հաշվառքային քարտերին,  
ապա չե՞ վոր ամեն մի պատահական մարդ  
ամեն մի խաբեբա կարող եր, առանց վորևե  
դժվարության, մեր շարքերը սողոսկել:

Ահա ձեզ մի որինակ Հյուսիսային Դոն-  
յան շրջանից: Այնտեղ հաշվառքի և կուս-  
փաստաթղթերի պահպանման անպատաս-  
խանատվության հետևանքով տեղի ունեցավ  
այսպիսի մի դեպք: Շրջանային հողվարչու-  
թյան մեջ գտման յենթարկվեց 1932 թվին  
կուսանդամ Վետոչկինը: Համան ժամանակ  
պարզվեց, վոր Վետոչկինը կուսակցություն ե  
մտել խաբեբայության միջոցով: Լինելով  
կոմսոմոլի Մայլեսկի ռայկոմի գործերի կա-  
ռավարիչ, նա վերցրեց ժամանակավոր  
վկայականի և հաշվեքարտի բլանկներ, լեց-

լեց նրանք և յուրացրեց ՀԿԿ(բ)-ի անդամի  
կոչում՝ այդ փաստաթղթերի վրա փակցնե-  
լով կուսուսկոմի ծրարների վրա յեղած  
կնիքը: Այս կեղծված փասթաթղթերը Վե-  
տոչկինը հետագայում փոխարինեց նորերով,  
այն պատճառաբանությամբ, թե հին  
կուսփաստաթղթերը սաստիկ մաշվել են:  
Խաբելով այսպիսով կուսկազմակերպու-  
թյուններին, նա գտման յեկավ արդեն իս-  
կական փաստաթղթերով:

Չե՞ վոր դուք գիտեք, թե ինչ նշանակու-  
թյուն ունի կուսակցական տոմսը, իսկ ինչ  
ասես չեն անում կուստոմսերի հետ: Իսկ  
չե՞ վոր յեզել են փաստեր, յերբ առանձին  
«կոմունիստներ» իրենց կուստոմսերը թող-  
նում եյին և՛ հյուրանոցներում, և՛ վարսա-  
վիրանոցներում, և՛ ուրիշ տեղերում: Պատա-  
հում ե այսպես. ածիլվեց, իսկ փողը մոռա-  
ցել ե իր հետ վերցնել, չի կարող վճարել, և  
ահա իր կուստոմսը գրավ ե դնում: Մի՞թե  
կարելի յե այսպես վարվել կուստոմսի հետ:

Ինչո՞ւ այսպիսի բաներ կարող են պատա-  
հել: Միայն նրա համար, վոր մենք չենք  
հետևում մեր «կուսակցական տնտեսու-  
թյանը»: Մեր մի շարք կուսկազմակերպու-  
թյուններում յերևան են հանված կուստոմ-

սերի հետ վարվելու կոպիտ կամայականություն և բոլորովին անհանգուրժելի քսոս կոմունիստների հաշվառման ասպարիզում: Ոգտվելով այս դեպքից, մեր թշնամիները գողանում են հաշվառքի քարտերը, գողանում են կուստոմսերը, և այս միջոցով սողոսկում են մեր կուսակցութեան մեջ:

Չե՞ վոր մեզ մոտ կոմունիստները պատասխանատուություն չեյին կրում կուստոմսը կորցնելու համար: Կուստոմսը կորցրելը, գնացիւր հայտարարեցիւր ռայկոմին—այնտեղ քեզ կտան վկայական, մանր տառերով կհայտարարեն այդ մասին մամուլում, վոչ վոք այդ հայտարարութեանները չի կարգում, իսկ հետո քեզ ապիւս են նոր կուստոմս: Այս բոլորը մեզ մոտ ձևականորեն և բոլորովին անպատասխանատու կերպով եր արվում:

Մենք պետք է ստիպենք կոմունիստներին պատասխանատու լինել նրանց արված կուսակցական տոմսերի համար: Հարկավոր է գործն այնպես դնել, վոր կուստոմսը կորցնելու մասին հայտարարութեան ավող վոչ մի կոմունիստ չկարողանա այն գուր տեղն ստանալ: Յուրաքանչյուր այսպիսի դեպքում հարկավոր է մանրագնին ստուգել, թե յերբ, վորտեղ, ինչ պայմաններում է կորցրել ըն-

կերն իր կուստոմսը, և, հանգամանքներին նայած, այսպիսի կոմունիստին կարելի յե թողնել և առանց տոմսի—հանել նրան կոմունիստական կուսակցութեանից: Կուսակցական տոմսը պետք է պահպանել աչքի լույսի պես: Կուսակցութեան ամեն մի անդամ, յեթե նա ցանկանում է կուսանդամ լինել, պետք է հիշե, վոր յուրաքանչյուր կորցված կամ գողացված կուստոմսը հնարավորութեան է տալին մեր կուսակցութեան վոխերիմ թշնամիներին և բանվոր դասակարգի դավաճաններին թափանցել մեր կուսակցութեան շարքերը: Յեվ այն կոմունիստը, վորն իր անհոգութեամբ անհարազատ մարդկանց համար հնարավորութեան է ստեղծում սգտագործելու կուսակցական տոմսերը, այդպիսին զառնում է կուսակցութեան թշնամիների գործակից:

Մոտ ապագայում լինելու յե նոր անդամների ընդունելութեան: Այս գործում մենք նույնպես պետք է հաշվի առնենք զտման դասերը և թույլ չտանք այնպիսի դեպքեր, վորոնք յեղել են մեզ մոտ առաջներում, յերբ կուսակցութեան մեջ ընդունվում եյին առանց ջոկելու: Չե՞ վոր վեշենսկի ռայոնում պատահել է այնպիսի դեպք, յերբ «Իեն

ուրաժայ» կուրսնտեսութեան մեջ կուսակցութիւն ընդունվեց ակտիվ սպիտակ-գլխաւոր-դիական Ալֆերովը, վորը ղտմանն ուղղակի հայտարարեց. «Իմ հետեւից յերեք անգամ ուղարկեցին գյուղական կատարածու, առաջարկելով ներկայանալ կուսժողովին: Վախենալով, վոր ինձ չտուգանեն, յես գնացի ժողովին, վորտեղ ել ինձ ընդունեցին կուսակցութեան մեջ» (Միծաղ):

Այժմ, յերբ կսկսվի ընդունելութիւնը կուսակցութեան մեջ, կասկած չկա, վոր մենք այս հարցին այսպես չենք մոտենա: Չտուժը մեզ վորոշ բան սովորեցրեց, և ինչպես պետք է ընդունել կուսակցութեան մեջ, այդ բանը մեզ կսովորեցնի կուսակցութեան կենտրոնական կոմիտեն: Չէ վոր հիմա յել մեզ մոտ-քիչ չեն խորթ տարրեր, վորոնք ձգտում են մեր կուսակցութեան մեջ սողոսկել, և այս ամենապատասխանատու գործում մենք պետք է յերևան հանենք կրկնապատիկ հեղափոխական, բոլշևիկյան զգաստութիւն:

Չաման ժամանակ մենք հանդիպեցինք կոմունիստների կողմից կուսակցական անդամավճարները մուծելու անթույլատրելի դրութեանը: Չէ վոր անդամավճարներ տալը կու-

մունիստի կուսակցութեան մեջ մնալու հիմնական պայմաններից մեկն է հանդիսանում, նրա ուղղակի և անմիջական պարտականութիւնը, վորպիսին սահմանում է մեր կուսակցութեան կանոնադրութիւնը: Իսկ ինչպիսի դրութիւն էր մեզ մոտ: Մի քանի կուսկազմակերպութիւններում յեղել են այնպիսի դեպքեր, յերբ, որինակ, Հոկտեմբերյան որերին կամ ուրիշ տոներին արտագրութեան հարվածայիններին պարգևատրելիս, պարգևատրում էյին նաև կուսանդամավճարները հավաքողներին: Սա ինչ է ցույց տալիս, ընկերներ: Այն, վոր շատ կուսկազմակերպութիւններում կոմունիստների անդամավճարներ հավաքելը կարծես թե վարձով է:

Անդամավճարների մասին հոգում ելին վոչ թե իրենք՝ կոմունիստները, այլ հատուկ նշանակված անձնավորութիւններ, և յեթե այդ գործի համար նշանակված ընկերը կանոնավոր չէր հավաքում անդամավճարները, ապա կոմունիստներն ամեն ժամանակ չէյին հետաքրքրվում այդ հարցով, և չէյին կատարում մեր կուսակցութեան հանդեպ նրանց ունեցած ուղղակի պարտականութիւնները: Այդ գործը հավաքողներին հանձ-

ներ, կամ գտումն անցած այդ աշխատող-  
ների 8 տոկոսը:

Բացի դրանից մենք հեռացրինք 657 հողի  
խորհրդային, արհմիութենական և անտեսա-  
կան կազմակերպությունների ղեկավար աշ-  
խատողներ: Այդ աշխատողների մեծամաս-  
նությունը—135 մարդ—հեռացված են կու-  
սակցություն և պետություն կարգապահու-  
թյունը խախտելու համար, 117 մարդ—  
դասակարգայնորեն անհարազատ և մեզ թըշ-  
նամի տարրեր, 101 մարդ կարյերիզմի, մոր-  
թեպաշտություն, ծառայություն գրությունը  
շահամոլական նպատակներով ոգտագործե-  
լու համար, 100 մարդ կրնցաղային և բա-  
րոյական այլասերման համար, 99 մարդ—  
այլասերվածներ, վորոնք ձուլվել էյին բուր-  
ժվական տարրերի հետ, 47 մարդ—կուսակ-  
ցություն մեջ պասիվ լինելու համար, 37  
մարդ—ինքնաքննադատությունը ճնշելու հա-  
մար, 20 մարդ—յերկերեսանիներ և այլն:

Այ, տեսնում եք, թե ինչպիսի քանակու-  
թյամբ կուսակցական և անտեսական ղեկա-  
վարներ էյինք ստիպված հեռացնել կուսակ-  
ցությունից: Այդ խոսում ե այն մասին, վոր  
այդտեղ վոչ բավականաչափ ուշադրությամբ  
էյին ջոկվում այդ կադրերը, իսկ հաճախ

մեր կազմակերպությունները մինչև անգամ  
չէյին ճանաչում իրենց կադրերին:

Բնորոշ որինակ կարող ե ծառայել Ռոս-  
տովի Լենինյան շրջանի Մանկավարժական  
ինստիտուտը: Այդ ինստիտուտի մաթեմա-  
տիկական բաժանմունքում խմբական կուս-  
կազմակերպիչն 8 ամսվա ընթացքում ան-  
կուսակցական մի սւսանող եր: Կամ թե  
Շախտի շրջանում քաղխորհրդի նախագահ,  
բաղկումի բյուրոյի անգամ և նույնիսկ Յեր-  
կրկումի անգամ եր կուսանգամ Ավագովը:  
Զուման ժամանակ պարզվեց, վոր անցյալում  
նա ծառայել ե Վրաստանի մենշևիկյան մի-  
լիցիայում: 1918-ից մինչև 1920 թվական-  
ներում նա գտնվել ե սպիտակների տերի-  
տորիայում և առևտուր ե արել Ռւսո—Լաբա  
կայարանի բուֆետում: Այ ձեզ և «ղեկա-  
վար»:

Կամ թե անա ինչպիսի կադրեր էյին ջոկ-  
ված Ռոստսերմաշում: Այնտեղ գործիքների  
ցեխի կուսկազմակերպիչն եր կուսանգամ  
Պենկովը, վորը ծառայել ե սպիտակների  
մոտ, վորպես դահիճ, ուղեկցել ե գերի ըն-  
կած կարմիրբանակայիններին, գնդակահարել  
ե և կատարել ե գերեզմանափորի պաշտոն:  
Հենց այնտեղ ել, փայտամշամկան կոմբի-

նատում, կուսանդամ կլոչկովն սկզբում բլջի քարտուղար եր, իսկ հետո ցեխկոմի նախագահ: Նա գիտարի համար գրավել էր գրել իր կուստոմսը և ապա 18 ամիս չեր մուծել անդամավճարներ: Կլոչկովը քաղաքականապես բոլորովին անզրագետ ե:

Այ, տեսնում եք, ընկերներ, թե ինչպես վատ եյին մոտենում մի քանի կուսկազմակերպություններում ղեկավար ստորին կուսկադրերի ընտրության գործին:

Զաման ժամանակ շատ կուսկազմակերպություններում հայտաբերվեցին նոր աճող կադրեր և կուսակցությունից հեռացվածների փոխարեն վոչ վատ աշխատողների շատ առաջքաշումներ եյին արված: Վատ չանցավ գտումը Դոնյան պետական ծխախոտագործարանում, վորտեղ առաջ եյին քաշված մի շարք բանվորուհիներ: Նրանց սկզբում առաջ եյին քաշում փոքր աշխատանքի համար, իսկ այժմ պետք ե ստուգել, թե ինչպես են նրանք աշխատում նոր տեղերում, և նրանցից լավագույններին պետք ե առաջ քաշել աշխատանքի ավելի պատասխանատու տեղամասերի համար: Մենք այդ առթիվ պետք ե կենսագործենք ընկ. Ստալինի ցուցումները — աճեցնել և առաջ քաշել

մեր լավագույն կադրերին: Ընկ. Ստալինը ահագեմիկները ավարտման առթիվ արտասանած իր ճառում ասում եր այն մասին, թե ինչպես պետք ե հոգ տանել կադրերի աճեցման և առաջքաշման մասին:

Ուզում եմ ցույց տալ ձեզ, թե մենք ինչպես պետք ե վերաբերվենք մեր կադրերին, և առանձին որինակներով ուզում եմ ցույց տալ, թե յերբեմն մեզ մոտ ինչ խայտառակ վերաբերմունք են ցուցաբերում դեպի այդ գործը: Յեթե մեզ մոտ լավ աշխատողը մի վորես գործ մի քիչ գլուխ չի բերել, ապա բացատրիր նրան և ոգնիր, իսկ մեզ մոտ հաճախ լինում ե այնպես, վոր գալիս են տեղը, հայհոյում նրան, ամեն տեսակ նկատողություններ անում, իսկ ոգնել ընկերոջը, բացատրել նրան, թե ինչպես պետք ե անել — այդ շատ հաճախ մեզ մոտ չի արվում:

Ահա ձեզ կոնկրետ որինակ, թե ինչպես չպետք ե դաստիարակել կադրերին, ինչպես չի կարելի վերաբերվել աշխատողներին: Այս տարվա սկզբին ՀԿԿ(բ) Յերկրկոմի կազմբյուրոյին դիմեց Ուսպենսկի շրջանի «Ֆակել Ռեվոլյուցիի» կուստեսուլթյան կուսկազմակերպիչ ընկ. Մոխեսյենկոն: Նա խնդրում

եր շրջանում ոգնել իր կոլտնտեսութեանը, վորովհետև այդ կոլտնտեսութեանն ունեւր միայն 130 աշխատունակ կոլտնտեսականներ և իր ուժերով չեւր կարող գլուխ բերել ցանքսի կամպանիան: Բացի դրանից, այդ կոլտնտեսութեանն անցած տարիներից մեծ պարաք ունեւր Փինանսական մարմիններին, չեւր վճարել կոլտնտեսականներին ըստ աշխտութեւի, և դրա հետևանքով բոլորովին քայքայվել եր: Փոխանակ ոգնելու կուսկազմակերպչին՝ ամրապնդելու իր կոլտնտեսութեանը, շրջանի կազմբյուրոն, ըստ եյութեան չքննարկելով նրա դիմումը, մեղադրեց նրան՝ անվանելով «դավաճան», «մատնիչ», «պրոպակատոր» և հեռացրեց նրան կուսակցութեանից: Միայն յերբ այդ գործին խառնվեց ՀԿԿ(բ) Կենտկոմին կից կուսկերահսկողութեան հանձնաժողովը, այդ կոլտնտեսութեանը տրվեց անհրաժեշտ ոգնութեան, վերականգնվեց կոլտնտեսութեան կուսկազմակերպիչ ընկ. Մոխսեյենկոն կուսակցութեան մեջ, վորովհետև նրա դեմ ուղղված մեղադրանքները բոլորովին հիմնավորված չեյին: Նա յեկել եր ոգնութեան խնդրելու, իսկ դրա փոխարեն նրան անպատվեցին՝ «դու դավաճան ես, դու մատնիչ ես» և այլն:

Այնպես քարկոծեցին, վոր չգիտես սենյակից ուր փախչել, իսկ հետո նրան հեռացրին կուսակցութեանից: Ճիշտ ե, այժմ նա վերականգնված ե, համապատասխան վերադաս մարմիններն ոգնեցին նրան, բայց այդպիսի խայտառակ դեպքեր կարելի յե բերել, ինչքան ուզեք:

Հավ աշխատող, լավ կադրեր դաստիարակելն ու աճեցնելը հեշտ գործ չե: Բանը կայանում ե նրանում, վորպեսզի ուշադիր և զգայուն վերաբերմունք ցուցաբերվի դեպի աշխատողը, իսկ մեզ մոտ յերբեմն այդ ել չի արվում: Այ, որինակ, Նովորոսիսկում աշխատում եր դատախազի պաշտոնում ընկեր Բունովը, նախկին սպիտակ գվարդիական, կուսանդամ 1918 թվից: Հանրապետութեան դատախազութեան մեջ ընկ. Բունովին համարում եյին տեղական լավագույն դատախազներից մեկը, իսկ Ազով-Սևծովեան կազմակերպութեանները մինչև անգամ միջնորդութեան եյին հարուցել կառավարութեան առջև ընկ. Բունովին Աշխատանքային կարմիր դրոշով պարգևատրելու համար: Բայց անա Նովորոսիսկում ընկ. Բունովի աշխատանքում վատ փոխհարաբերութեաններ ստեղծվեցին նրա ոգնականի հետ, և ընկեր

Բունովը հարցը դրեց դատախազության առջև իրեն ուրիշ աշխատանքի փոխադրելու մասին: Հաշվի առնելով ընկերոջ դիմումը, Միության դատախազությունը նրան նշանակեց նոր աշխատանքի — Ստորին Վոլգայի ջրային արանսպորտի դատախազ:

Իրանից հետո, հենց վոր ընկ. Բունովը հեռացավ Ազով-Սևծովյան յերկրամասից, նույն այն կազմակերպությունները, վորոնք առաջ միջնորդություն էյին հարուցել նրան շքանշանով պարգևատրելու մասին, նրան սկսեցին մեղադրել կաշառակերության մեջ: Յերբ ստուգման ժամանակ այդ մեղադրանքները չհաստատվեցին, նրա դեմ ստեղծեցին նոր մեղադրանք, վոր իբր թե նա քայքայել էր իր աշխատանքը Նովորոսիսկի դատախազության մեջ: Այդ գործը բավականաչափ չստուգեցին, և ընկ. Բունովի նոր աշխատանքի անցնելուց 20 օր հետո, նրա գործի վերաբերյալ նրա բացակայությամբ վորոշում հանվեց նրան Նովորոսիսկի դատախազի պաշտոնից հանելու և նրան հանդիմանություն անելու մասին: Այդպիսի մեթոդներով ընկերոջը սկզբում գովաբանեցին, իսկ հետո անարգեցին, — մենք չգիտենք աճեցնել և դատախազակել մեր կադրերին:

Քիչ կարող են լինել դեպքեր, յերբ մեր աշխատողները դեռ չեն վարժվել, իսկ յերբ նրանց փոխադրում են, ապա աշխատանքն էլ առաջ է գնում: Իսկ այստեղ՝ քանի վոր դու մեզնից հեռացել ես, այդ պատճառով էլ գործ ենք ստեղծել: Այդպես չպետք է վերաբերվել կադրերին, թե չէ այն է ստեղծվում, վոր այսօր մենք նրան աճեցնում ենք, իսկ վաղը՝ հեռացնում: Այդպես անել չի կարելի:

Ընկ. Սալիցն ասում է մեզ, թե ինչպիսի մարտական աշխատանքում են կոփված և դարբնվում մեր կադրերը՝ «կադրերի իսկական կոփումն ստացվում է կենդանի աշխատանքում, դպրոցից դուրս, դժվարությունների դեմ մղվող պայքարում, դժվարությունների հաղթահարման մեջ: Հիշեցեք ընկերներ, վոր միայն այն կադրերն են լավ, վորոնք չեն վախենում դժվարություններից, վորոնք չեն թագնվում դժվարություններից, այլ ընդհակառակը, ընդառաջում են դժվարություններին, վորպեսզի նրանք հաղթահարեն և վերցնեն: Միայն դժվարությունների դեմ մղվող պայքարում են կոփվում իսկական կադրեր»:

Իուք պետք է նկատի ունենաք, վոր մեր

պետութիւնն աճում ե, մեզ պետք են կազ-  
րեր: Մեզ պետք են լավագույններից լավա-  
գույն կազրեր: Իսկ ի՞նչ ե յերբեմն մեզ  
մոտ լինում: Յես ուզում եմ ասել ԲՈՒՀ-երի  
մասին: Ինչպիսի անուշադրությամբ են յեր-  
բեմն ընտրվում այնտեղ մեր կազրերը:  
Ընկ. Ստալինն ասում եր, վոր մեր յերիտա-  
սարդութիւնը սովորում ե, տեխնիկայես  
աճում ե, կանգնում ե զեկավոր պոստե-  
րում — դառնում ե Փարբիկների և գործա-  
բանների դիրեկտորներ: Իսկ այդպիսի կազ-  
րերի մեջ մտնում են յերբեմն անհատական  
մարդիկ, և մենք դրա վրա վոչ միշտ ուշադրու-  
թիւն ենք դարձնում: Դասատունների կազմը  
մի շարք գեպքերում նույնպես բոլորովին ան-  
պետք ե լինում, և մենք դրա վրա յել հարկ  
յեղած ուշադրութիւն չենք դարձնում: Յեվ  
դրա հետևանքն այն ե լինում, վոր մենք  
վոչ մշտապես ենք աճեցնում մեր կազրերն  
այնպես, ինչպես սովորեցնում ե մեզ այդ  
մասին ընկ. Ստալինը:

Վերջացնելով զեկուցումս, յես ձեր ուշա-  
դրութիւնը գրավում եմ այն հանգամանքի  
վրա, վոր անհրաժեշտ ե հաշվի առնել կուս-  
կազմակերպութիւն զտման ընթացքում հայ-  
տաբերված թերութիւնները և այնպես

վերակառուցել ձեր աշխատանքը, ինչպես  
սովորեցնում ե անել Կենտրոնական Կոմիտեն  
և մեր առաջնորդ ընկ. ՄՍԱԼԻՆԸ: Մենք պետք  
ե ավելի սովորենք հայտաբերել, աճեցնել  
և պահպանել մեր կազրերը, բարելավել մեր  
«կուսակցական տնտեսութիւնը», խնամքով  
վերաբերվել զեպի կուսակցական փաստա-  
թղթերը, ճիշտ կարգավորել կուս-դաստիա-  
րակչական աշխատանքը կոմունիստների միջև  
և զգաստորեն վերաբերվել կուսակցութիւն  
մեջ ընդունելիս:

Յես հուսով եմ, վոր Ազով-Սևծովյան կուս-  
կազմակերպութիւնը հաշվի կառնի զտման  
ընթացքում և զտուժից հետո մերկացված  
թերութիւնները, և իսկական ձեվով, բու-  
ջեիկորեն, լենինաբար, ստալինաբար կտանի  
նայե՛վ իր հետագա աշխատանքը (ԲԱՒՆ ծա-  
փահարութիւններ):

պետութիւնն աճում ե, մեզ պետք են կազ-  
րեր: Մեզ պետք են լավագույններից լավա-  
գույն կազրեր: Իսկ ի՞նչ ե յերբեմն մեզ  
մոտ լինում: Յես ուզում եմ ասել ԲՈՒՀ-երի  
մասին: Ինչպիսի անուշադրությամբ են յեր-  
բեմն ընտրվում այնտեղ մեր կազրերը:  
Ընկ. Ստալինն ասում եր, վոր մեր յերիտա-  
սարգութիւնը սովորում ե, տեխնիկայես  
աճում ե, կանգնում ե ղեկավար պոստե-  
րում — դառնում ե Ֆարբիկների և գործա-  
րանների ղիրեկտորներ: Իսկ այդպիսի կազ-  
րերի մեջ մտնում են յերբեմն անհատական  
մարդիկ, և մենք զրա վրա վոչ միշտ ուշադրու-  
թիւն ենք դարձնում: Դասատուների կազմը  
մի շարք ղեպքերում նույնպես բոլորովին ան-  
պետք ե լինում, և մենք զրա վրա յել հարկ  
յեղած ուշադրութիւն չենք դարձնում: Յե՛վ  
զրա հետևանքն այն ե լինում, վոր մենք  
վոչ մշտապես ենք աճեցնում մեր կազրերն  
այնպես, ինչպես սովորեցնում ե մեզ այդ  
մասին ընկ. Ստալինը:

Վերջացնելով ղեկուցումս, յես ձեր ուշա-  
դրութիւնը գրավում եմ այն հանգամանքի  
վրա, վոր անհրաժեշտ ե հաշվի առնել կուս-  
կազմակերպութիւնն զտման ընթացքում հայ-  
տաբերված թերութիւնները և այնպես

վերակառուցել ձեր աշխատանքը, ինչպես  
սովորեցնում ե անել կենտրոնական կոմիտեն  
և մեր առաջնորդ ընկ. ՄՏԱԼԻՆԸ. Մենք պետք  
ե ավելի սովորենք հայտաբերել, աճեցնել  
և պահպանել մեր կազրերը, բարելավել մեր  
«կուսակցական տնտեսութիւնը», խնամքով  
վերաբերվել ղեպի կուսակցական փաստա-  
թղթերը, ճիշտ կարգավորել կուս դաստիա-  
րակչական աշխատանքը կոմունիստների միջև  
և զգաստորեն վերաբերվել կուսակցութիւն  
մեջ ընդունելիս:

Յես հուսով եմ, վոր Ազով-Սևծովյան կուս-  
կազմակերպութիւնը հաշվի կառնի զտման  
ընթացքում և զտումից հետո մերկացված  
թերութիւնները, և իսկական ձե՛վով, բոլ-  
ջնիկորեն, լենինաբար, ստալինաբար կտանի  
նայե՛վ իր հետագա աշխատանքը (ԲՈՒՀ ծա-  
փահարութիւններ):

**ՌՈՍՏՈՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՏԻՎԻ  
ԺՈՂՈՎԻ ԲԱՆԱԶԵՎԸ**

**ԱԶՈՎ-ՍԵՎԾՈՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՄԱՍԻ ԿՈՒՍԱԿՑ-  
ՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՁՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱ-  
ՍԻՆ ՅԵՎ «ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ»  
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԸՆԿ. Մ. Ք. ՅԿԻՐ-  
ՅԱՏՈՎԻ ՅԵՎ ԲԵՐԵՋԻՆԻ ԱՐԱԾ ԶԵԿՈՒՑՈՒՄ-  
ՆԵՐԻ ԱՌԹԻՎ**

Կուսչարքերի գտումը հաստատեց, վոր  
Ազով-Սևծովյան յերկրամասի կուսակցական  
կազմակերպությունը կազմակերպչորեն և  
իզեա-քաղաքականապես ամուր բոլշևիկյան  
կազմակերպություն է, վորը յերկաթյա  
միասնությամբ համախմբված է կուսակցու-  
թյան Կենտրոնական Կոմիտեյի և կուսակ-

ցության առաջնորդ ընկ. Մտալինի շուրջը  
Ձտումը նոր աստիճանի վրա բարձրացրեց  
բոլշևիկյան ինքնաքննադատությունը յերկրա-  
մասի կուսակազմակերպություններում, բարձ-  
րացրեց մեր կուսակցության հեղինակու-  
թյունը բոլոր աշխատավորների միջև, ուժե-  
ղացրեց կուսակազմակերպության առաջատար  
դերը և կոմունիստների ավանգարդային  
դերը ձեռնարկություններում և կոլանտե-  
սություններում, զգալիորեն նպաստեց կո-  
մունիստների զաղափարական — քաղաքա-  
կան աճմանը, անկուսակցական լախ մաս-  
ոսանքի հետ կուսակցության ունեցած  
կապի ամրացմանը, մասսաներին կուսակ-  
ցության շուրջը մոբիլիզացիայի յենթար-  
կելուն և համախմբելուն:

Իրա հետ մեկտեղ, գտումը, մաքրելով հան-  
դերձ կուսակազմակերպությունը կուսակցու-  
թյանը խորթ տարրերից, լուրջ թերություն-  
ներ հայտարերեց յերկրամասի մի շարք կուս-  
կազմակերպությունների աշխատանքում,  
առանձնապես ներկուսակցական աշխատանքի  
ասպարիզում:

Կուսակառիվի ժողովը նշում է, վոր գտումից  
հետո մի քանի կուսակազմակերպություններ  
ինքնահանգստացան, թուլացրին կուսակցա-

կան զգաստությունը, անբավարար են աշխատում գտման ընթացքում հայտարարված բոլոր թերությունները շտկելու ուղղությամբ:

Ակտիվը նախազգուշացնում է Ռոստովի կուսակազմակերպության բոլորիկներին զրաման ժամանակ սրված կուսակցական զգոնությունը թուլացնելու առթիվ, և պարտավորեցնում է անհաշտելիորեն շարունակել կուսակազմակերպությունն ամեն տեսակի հակուսակցական տարրերից մաքրելու գործը:

Ակտիվը գտնում է, վոր «կուսակցական տնտեսության» մեջ յեղած այն աղաղակող թերությունները, վոր մատնանշեց կուսակցության Կենտրոնական Կոմիտեն, լիովին վերաբերում է նաև Ռոստովի կուսակազմակերպությանը, Կուսակցական կոմիտեների շատ քարտուղարներ և կուսակազմակերպիչներ դեռ մինչև այժմ թերագնահատել են Կենտկոմի ցուցմունքների նշանակությունը և անհրաժեշտ միջոցներ ձեռք չեն առել «կուսակցական տնտեսությունը» կարգավորելու համար:

Փողովը նշում է, վոր մի շարք կուսակազմակերպություններում խայտառակ վերաբերմունք է ցույց տրվում կուսակցական

փաստաթղթերի պահպանման և հանձնման, կուսուսուխոսների հաշվառման գործի հանդեպ, վոր սխալ են ձևակերպվում կուստոմսերը և հաշվեքարտերը և այլն, վորպիսի հանգամանքը չէր կարող չհանգեցնել այն բանի, վոր առանձին խորամանկ հակահեղափոխականներն անպատիժ կերպով ոգտապործել են կուստոմսերն իրենց ստոր նպատակների համար:

Ակտիվը նշում է, վոր ընկ. Ստալինի պատմական ճառը Կարմիր բանակի ակադեմիկների ավարտմանը, պետք է հանդիսանա բոլոր կուսակցական, տնտեսական, խորհրդային, արհմիութենական և կոմյերիտական կազմակերպությունների աշխատանքի ծրագիրը՝ կադրեր պատրաստելու, աճեցնելու և առաջ քաշելու գործում: Մինչդեռ շատ կուսակցական և ուրիշ կազմակերպություններ դեռ մինչև այժմ չեն հասկացել և զիտակցել մեծագույն նշանակությունը կուսակցության այն նոր լողունը, վոր «կադրերը վճռում են ամեն ինչ»:

Բոլոր կուսակազմակերպությունների գործնական աշխատանքում անխնա կերպով արմատախիլ պետք է արվեն «փոքր» և «մեծ» աշխատողների հանդեպ ցույց տրվող անո-

դատար վերաբերմունքը, իսկ հաճախ անհոգի-բյուրոկրատական մոտեցումը գեպի մարդիկ:

Կուսակառիվն առանձնապես ընդգծում է, վոր քաղկոմներին կից կուսկազրերի բաժիններ ստեղծելու մասին կենտկոմի կայացրած վորոշումը և կուսկազմակերպչական և քաղդատափարակչական աշխատանքի մասին Լենինգրադի քաղկոմի և ՀԿԿ(բ) Յերկրկոմի օպերիլի 2-ի վորոշումները վորջ կուսակցական աշխատանքի վճռական վերակառուցման ծրագիր են հանդիսանում, վորպիսին դեռ չեն հասկացել յերկրամասի շատ կուսկազմակերպությունները:

Ակտիվի ժողովը, հավանություն տալով գտման վերաբերյալ կատարված աշխատանքին, պարտավորեցնում է բոլոր կուսկազմակերպություններին բարեխղճորեն կատարել գտման հանձնաժողովների ցուցումները և ռայկոմների ու քաղկոմների կողմից կազմակերպել այդ ցուցումների կատարման ստուգում:

Ակտիվը գտնում է, վոր «կուսակցական տնտեսության» կարգավորման աշխատանքը սեփական «կուսակցական տանը» (կուստոմսերի ստուգումը և պահպանումը, կոմու-

նիստաների ճիշտ հաշվառումը, անդամավճարները հավաքելու պատասխանատվության բարձրացումը և այլն) պետք է անպայման ավարավի Յերկրկոմի սահմանած ժամկետներում վոչ թե ձևականորեն, այլ ըստ էյության, և հանձնարարում է քաղկոմին և ռայկոմներին սխտեմատիկ հրահանգներ տալ և գործնականապես ոգնել ստորին կուսկազմակերպություններին այս աշխատանքում:

Ակտիվը հանձնարարում է ՀԿԿ(բ) քաղկոմին նշել ընկ. Ստալինի ճառի իրականացման կոնկրետ միջոցառումներ, այն հաշվով վոր յուրաքանչյուր ձեռնարկություն ունենա վոչ միայն կուսակցական, այլ նաև տնտեսական, տեխնիկական և կուլտուրական վորակյալ կազրերի աճեցման մտածված և լայն պլան:

Ակտիվը հավանություն է տալիս ամուլա շրջանում զանազան դասընթացներում ստորին կուսակցական կազրեր (900 մարդ) պատրաստելու և նախապատրաստելու վերարերյալ քաղկոմի նախատեսած պլանին:

Ընկ. Ստալինի ճառում տրված ցուցումների իրացումը, «կուսակցական տնտեսության» որինակելի կարգավորումը, գտման հանձնաժողովների ցուցումների իսկական

46833

36-11  
1991

կիրառումը, կուսշարքերի հավատ  
 կանները, տրոցկիստական-զինովյեվակ մտա-  
 կանքների դեմ թագնված մնացորդներից բո-  
 լորովին մաքրելու համար մղվող պայքարը  
 մեր կուսկազմակերպութունից պահանջում  
 են վճռականապես բարձրացնել բոլշևիկյան  
 զգաստութունն աշխատանքի բոլոր ճյու-  
 դերում (կուսակցական, խորհրդային, արհ-  
 միութենական, կոմյերիտական, Ժողովրդա-  
 կան կրթության, առողջապահության և  
 այլն), հետագայում ել ավելի բարձրացնել  
 կոմունիստների գաղափարա-քաղաքական  
 գինվածությունը, վճռական լավացման և  
 բոլշևիկյան թափի հիման վրա վողջ կուսակ-  
 ցական աշխատանքում:

